ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» հ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 14 ՆԻՍՏԻ

Ք.Երեւան 09.01.2025թ.

«Հայաստանի ֆիզիկական կոըլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) արտահերթ նիստն անցկացվեց առկա եղանակով ՀՖԿՍՊԻ-ի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Երեւան, Ալ.Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ):

Նիստին ներկա էին 20 անդամներից 14-ը:

Կարեբ Գիլոյանը- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի Հոգաբարձուների Նախագահ

Գոհար Մամիկոնյանը-ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ

Արսեն Հակոբյան-ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ

Էդուարդ Քալանթարյան-Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մեկնաբան

Հարություն Ցավրյան-ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ

Ռոբերտ Խաչատրյան-Հայաստանի Ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ

Դավիթ Մոսինյան-<<Հակադոպինգային գործակալություն>> ՊՈԱԿ-ի տնօրեն

Աշոտ Տիրացույան-Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի հասարակական և հումանինտար գիտությունների ամբիոնի դասախոս

Եկատերինա Նահապետյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության տեսության,մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկակական կուլտուրայի դասախոս

Նարինե Մարե-Գասպարյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս

Լաուրա Միրզոյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Սուրեն Եղիազարյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Հեղինե Սարկիսյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Սուսան Ավետիսյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի առողջարարական տեխնոլոգիաների և սպորտային տուրիզմի կառավարման ֆակուլտետի սովորող

Բացակայում էին՝

Արսեն Միխայլով-ՀՀ վարչապետի օգնական

Սերգեյ Աբրահամյան-հեռուստատեսության և ռադիոյի անդամ

Սամվել Գևորգյան-Ն.Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիականմանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն

Անահիտ Բարսեղյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի հասարակական և հումանինտար գիտությունների ամբիոնի դասախոս

Լուսինե Տանանջյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի հասարակական և հումանինտար գիտությունների ամբիոնի դասախոս

Ժիրայր Դավեյան-- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Օրակարգ

1. Օրակարգի հաստատում,

2. ՀՖԿՍՊԻ հիմնադրամի 2023-2024թթ հաշվետվությունը

3. 2024թվականի կատարողականի հաշվետվություն

4. Այլ հարցեր:

Նախքան օրակարգի հաստատումը ՀԽ անդամ Գոհար Մամիկոնյանը առաջարկեց քննարկել 2025 թվականի նախահաշիվները:

Օրակարգի հաստատման վերաբերյալ հարցը ՀԽ նախագահ Կարեն Գիլոյանը դրեց քվեարկության:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի 1-ին հարց

Զեկուցող՝ Տիգրան Սիմոնյան

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը ներկայացրեց ՀՖԿՍՊԻ հիմնադրամի 2023-2024թթ հաշվետվությունը, նշելով,որ ինստիտուտում իրականացվել է բակալվրի 4 կրթական ծրագիր, մագիստրոսի 3 կրթական ծրագիր,հետբուհական կրթական 3 ծրագիր:Դիմողների քանակը հաշվետու տարում եղել է 888: Բակալավրի ուսանողները 2301 են, մագիստրոսները 12,օտարերկրացի ուսանողները 304, իսկ ասպիրանտները 6-ը:

Հաջորդ կետով նա նշեց աշխատակիցների քանակը՝388, որից 145 վարչական, 193 պրոֆեսորադասխոսական:Նշված պրոֆեսորադասախոսական անձնակազմից Դոկտոր Պրոֆեսրներ՝ 4 հոգի, Գիտությունների թեկնածու պրոֆեսորներ 9, պրոֆեսորներ 5,Գիտությունների թեկնածու դոցենտեր 41, դոցենտներ 11 և գիտությունների թեկնածուներ 9 հոգի:

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը նծեց,որ հաշվետու տարում ՀՖԿՍՊԻ ունեցել է 426 լիցենզավորված տեղեր,ունեցել է 363 դիմորդ,որից ընդունվել են 299՝256-վճարովի, 41-արտոնյալ:Ըստ մասնագիտությունների՝ առողջարարական տեխնոլոգիաների և սպորտային տուրիզմ-8, մարզչամանկավարժական ֆակուլտետ-278, ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության տեսության,մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկակական կուլտուրայի ֆակուլտետ 13: Առկա ուսուցման համակարգում ունեցել ենք 492 լիցենզավորվաց տեղեր, 394 դիմորդ,333 ընդունված դիմորդներ՝ վճարովի 275,անվճար 58: Նա նշեց, որ լրագրության և կինեզոլոգիայի մասնագիտություններում դիմորդները քչացել են, նշելով,որ պատճառը միասնական քննություններն են:

Ուսանողների կազմը և շարժը: Ընդհանուր ուսանողների քանակը հաշվետու տարում եղել է 2301 ուսանող, որոնցից առկա բակալավր՝1022, հեռակա բակալավր՝1279,սփյուրքահայ՝98,հեռացվաց ուսանողներ՝ 167:Ավարտած ուսանողների քանակը հաշվետու տարում 438՝ առկա 211, հեռակա 227:

Ուսանողների հաճախումները և առաջադիմությունը: Պարոն Սիմոնյանը հաճախումները և առաջադիմությունը նշեց տոկոսային հարաբերությամբ: Առկա համակարգի գերազանց ուսանողներ՝ 12%, հեռակա՝14,8%: Լավ գնահատակով ուսանողներ, առկա՝11,3%, հեռակա՝23,1%:Բավարար գնահատակնով ուսանողներ , առկա՝17,1,հեռակա՝30,1%:Անբավարար գնահատականով ուսանողներ, առկա՝ 59,6%, հեռակա՝28%: Ուսանողների հաճախումների վերաբերյալ Տիգրան Սիմոնյանը նշեց, որ նրանք համագործակցում են Ուսանողական խորհրդի հետ, և միասին փորձում են այնպես անել, որ հաճախումների ցուցանիշները գնալով բարձրանան:

Հաջորդիվ Տիգրան Սիմոնյանը նշեց ՖԻՄԱ մարզական ակումբի հաջողությունների մասին, նշելով, որ և՛ տղաները, և՛ աղջիկները տարբեր մարզաձևերում ունեցել են բազում նվաճումներ:

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը նշեց,որ հաշվետու տարում ինստիտում անց են կացվել ներքին վերապատրաստումներ դասախոսների համար:

Նա նշեց, որ ինստիտուտը սկսել է համագործակցել տարբեր միջազգային կազմակերպությունների հետ,որոնցից մեկը՝ Reebook սպորտային ակումբն է:

Նշեց,որ ինստիտուտը ունեցել է այցելություններ տարբեր կրթական դպրոցներից,որոնք եղել են տարբեր մարզերի գյուղերից և քաղաքներից:

Տիգրան Սիմոնյանը Նշեց, որ կան ուսանողներ, ովքեր իստիտուտը ավարտելուց հետո չեն աշխատում իրենց մասնագիտությամբ, պարզաբանելով,որ վարձատրությունը բականին ցածր է:

Դիտարկումներ:

Դիտարկում կատարեց Կարեն Գիլոյանը, հարց ուղղելով Տիգրան Սիմոնյանին և Անժելա Նուշիկյանին: Նշեց, որ ցանկանում է,որ նրանք պարզբանան են, թե ի՞նչ է արվել

հավատգրման չափանիշներին համապատասխանելու համար, և արդյո՞ք հիմա առկա է ինչ-որ խնդիր այդ հարցի վերաբերյալ, թե ոչ:

Պատասխան

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը պատասխանեց հարցին, ասելով,որ Որակի Ապահովման բաժինը աշխատում է և ընդացքում է հավատագրման գործընթացը և առնվազն 1 տարի հետո ինստիտուտը ունենալու է հավատարմագրություն: Նա նշեց , որ մինչ հավատարմագրումը կլուծվեն բոլոր խնդիրները :

Դիտարկումներ

Կարեն Գիլոյանը նշեց, որ կան մի քանի մասնագիտություններ, որտեղ չկան մարզիչներ, ովքեր մեծ պահանջարկ ունեն: Նշելով, որ դրանցից մեկը լողն է: Նշեց, որ կան բավականին շատ լողավազաներ,որոնք ունեն մարզիչներ,սակայն առանց որակավորման,ովքեր չունեն մասնագիտական կրթություն:

Ֆիտնեսի հետ կապված ևս նշեց, որ ամեն բան ընթացքի մեջ է և այտեղ նույնպես որակավորում ունեցող մարզիչներ են աշխատելու:

Անժելա Նուշիկյանը պատասխանեց ասելով, որ արդեն 2-3 տարի այդ խնդրի հետ իստիտուտը բախվում է,տարբեր լողավազաններ լողի մարզիչ են ցանկանում:Նշեց, որ պետք է հասկանալ, թե ինչու չեն ցանկանում ավարտած ուսանողները իրենց մասնագիտությամբ աշխատեն:Նշեց, որ Կարիեռայի Բաժնի ղեկավար Գայանե Չիլոյանը զանգահարում է շրջանավարտ ուսանողներին և հարցնում արդյոք կցանկանան աշխատել, թե ոչ:Սակայն ստանում են բացասական պատասխան:

Հարցը դրվեց քվեարկության ֆ ընդունվեց միաձայն:

Որոշվեց՝ հաշվետվությունը ընդունել բավարար:

Օրակարգի 2-րդ հարց

Տիգրան Սիմոնյանը ներկայացրեց 2024 թվականի կատարողականի հաշվետվությունը, բոլոր հարցերին տրվեց բավարար պատասխաններ(հաշվետվությունը կցվում է):

Հարցը դրվեց քվեարկության ֆ ընդունվեց միաձայն:

Որոշվեց՝ 2024 թվականի կատարողականի հաշվետվությու� համարել բավարար:

Առաջակներ:

Կարեն Գիլոյանը առաջարկեց ձևավորել մի քանի հոգուց կազմված հանձնաժողով, որը կաշխատի կատարողականի և նախահաշվի հետ:

Հարցը դրվեց քվեարկության ֆ ընդունվեց միաձայն:

Որոշվեց՝ ձևավորել 5 հոգուց կազմված հանձնաժողով,որը կաշխատի կատարողականի և նախահաշվի հետ:

Հոգաբարձուների խորհրդի Նախագահ Կարեն Գիլոյան

Քարտուղար Լաուրա Միրզոյան